ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 փետրվարի 2025 թվականի թիվ 55-Ա

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ ՀԳ-04139/24 ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ՝ **Հանձնաժողով**) 2025 թվականի փետրվարի 4-ի նիստում, քննարկելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ **ԿԳՄՍՆ կամ Նախարարություն**) վերաբերյալ թիվ ՀԳ-04139/24 վարույթը կարճելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. ***<u>Վարույթի ընթացքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 3-ի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 525-Ա որոշմամբ (այսուհետ՝ **թիվ 525-Ա որոշում**) հարուցվել է թիվ ՀԳ-04139/24 վարույթը (այսուհետ նաև՝ **թիվ ՀԳ-04139/24**):

Հանձնաժողովի 2024 թվականի դեկտեմբերի 3-ի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վերաբերյալ թիվ ՀԳ-04139/24 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 889-Ա որոշմամբ թիվ ՀԳ-04139/24 վարույթի ժամկետը երկարաձգվել է եռամսյա ժամկետով:

2. ***<u>Վարույթի հարուցման առիթի և հիմքի հակիրճ նկարագրությունը.</u>***

Հանձնաժողովի համակենտրոնացումների, պետական օժանդակության գնահատման և շուկաների վերլուծության վարչության համակենտրոնացումների և պետական օժանդակության գնահատման բաժնի կողմից 2024 թվականի օգոստոսի 29-ին ներկայացվել է զեկուցագիր՝ «Համաշխարհային աստղի հայաստանյան հյուրախաղեր» երաժշտական նախագծի շրջանակներում հիփ-հոփ արտիստ Սնուպ

Դոգի հայաստանյան համերգը կազմակերպելու նպատակով «Դոպինգ Սփեյս» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ նաև՝ **«Դոպինգ** Սփեյս» **ընկերություն**) առերևույթ արգելված պետական օժանդակության տրամադրման առնչությամբ:

Մասնավորապես՝ Կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի ««Համաշխարհային աստղի հայաստանյան հյուրախաղեր» երաժշտական նախագծի իրականացման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը հաստատելու, «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում և փոփոխություններ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գումար հատկացնելու մասին» թիվ 1365-Ն որոշմամբ **(**այսուհետ նաև՝ **Կառավարության թիվ 1365-Ն որոշում)** ֆինանսական միջոցներ է հատկացվել «Համաշխարհային աստղի հայաստանյան հյուրախաղեր» երաժշտական նախագծի շրջանակներում հիփ-հոփ արտիստ Սնուպ Դոգի հայաստանյան համերգը կազմակերպելու նպատակով:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ Նախարարության կողմից «Դոպինգ Սփեյս» ընկերությանը դրամաշնորհ տրամադրելը կարող է առերևույթ պարունակել արգելված պետական օժանդակության տրամադրման հատկանիշներ, ԿԳՄՍՆ կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ է հարուցել:

3. ***<u>Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության դիրքորոշումը.</u>***

Հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 010271 գրությամբ **(**այսուհետ նաև՝ **Թիվ 010271 գրություն)** ԿԳՄՍՆ -ին առաջարկել է Հանձնաժողով ներկայացնել դիրքորոշում:

Ի պատասխան Թիվ 010271 գրության՝ ԿԳՄՍՆ-ն հայտնել է, որ Սնուպ Դոգի համերգի կազմակերպման առաջարկը ներկայացրել է «Դոպինգ Սփեյս» ընկերությունը, այդ իսկ պատճառով «Համաշխարհային աստղի հայաստանյան հյուրախաղեր» երաժշտական նախագծի իրականացման ծրագրի **(**այսուհետ նաև՝ **Ծրագիր կամ Միջոցառում)** կատարումը վստահվել է նշյալ կազմակերպությանը:

ԿԳՄՍՆ-ն նշել է, որ հայտը ներկայացնելիս «Դոպինգ Սփեյս» ընկերությունը բավարար տեղեկատվություն է ներկայացրել իր մասին, միաժամանակ, ներկայացնելով հիմնավորումներ Հայաստանում համաշխարհային աստղերի, մասնավորապես՝ Սնուպ Դոգի մասնակցությամբ համերգային լայնամասշտաբ ծրագրեր իրականացնելու վերաբերյալ: Սնուպ Դոգի հայաստանյան համերգի արդյունքում Հայաստանի ճանաչելիության բարձրացման և զբոսաշրջության ընդլայնման վերաբերյալ նախնական վերլուծություն տրամադրել է կատարող կազմակերպությունը:

Բացի այդ, ԿԳՄՍՆ-ն նշել է, որ «Դոպինգ Սփեյս» ընկերությունը ընտրվել է որպես կազմակերպիչ Միջոցառման հեղինակային իրավունքների պաշտպանության

հիմունքով: Համաշխարհային աստղի մասնակցությամբ երևանյան համերգի կազմակերպման ընթացքի վերաբերյալ ԿԳՄՍՆ տեղեկացրել է, որ «Դոպինգ Սփեյս» ընկերությունը բանակցում է Միջոցառման հստակ ժամկետների և համերգի անցկացման այլ դրույթների վերաբերյալ:

4. ***<u>Հանձնաժողովի կողմից պահանջված և ստացված փաստաթղթերը և այլ տեղեկատվությունը</u>***.

1) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մասով.

Հանձնաժողովը թիվ 010271 գրությամբ դիմել է ԿԳՄՍՆ-ին հետևյալ տեղեկատվությունը ստանալու նպատակով.

1. երաժշտական նախագծի շրջանակներում այլ արտիստների ընտրության հնարավորությունների պարզաբանում, արդյոք նմանատիպ միջոցառումներ իրականացնող շահագրգիռ տնտեսավարող սուբյեկտները տեղեկացված են եղել կամ ստացել են առաջարկներ միջոցառում անցկացնելու վերաբերյալ,
2. ի՞նչ չափանիշներով է ընտրվել արտիստ Սնուպ Դոգը՝ առկայության դեպքում ներկայացնելով իրականացված ուսումնասիրության արդյունքները,
3. ի՞նչ չափանիշներով է ընտրվել «Դոպինգ Սփեյս» ընկերությունը՝ որպես միջոցառման կազմակերպիչ,
4. Նախարարության և «Դոպինգ Սփեյս» ընկերության միջև կնքված պայմանագր(եր)ի պատճեն(ներ)ը,
5. Միջոցառման իրականացման ներկայիս ընթացքի, նախատեսված ժամկետների, իրականացվելիք քայլերի վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան Հանձնաժողովի թիվ 010271 գրության՝ ԿԳՄՍՆ ներկայացրել է հետևյալ տեղեկատվությունը.

1. հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023 թվականի սեպտեմբերյան իրադարձությունների պատճառով համերգը հետաձգվել է՝ ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 15-ի N 218-Ն որոշման հիման վրա 2024 թվականի փետրվարի 19-ին Նախարարության և «Դոպինգ Սփեյս» ընկերության միջև կնքվել է N 1 Համաձայնագիրը՝ համաձայն որի համաշխարհային աստղ Սնուպ Դոգի համերգը իրականացվելու է 2024 թվականի ընթացքում՝ ըստ երկկողմանի գրավոր համաձայնեցված ժամանակացույցի, ընդ որում «Դոպինգ Սփեյս» ընկերությունը պետք է գրավոր ներկայացնի միջոցառման անցկացման ժամկետի առավելագույնը 3 առաջարկ, որի հիման վրա Նախարարությունը մեկ շաբաթվա ընթացքում պետք է հաստատի ներկայացված առաջարկներից որևիցե մեկը: Ըստ «Դոպինգ Սփեյս» ընկերության տրամադրած տեղեկատվության՝ երգչի հետ հստակեցվում են համերգի իրականացման նոր ժամկետները:
2. 2024 թվականի ընթացքում համերգի կազմակերպման համար լրացուցիչ գումար հատկացնելու, ինչպես նաև երգչին կրկին հոնորար վճարելու հարց չի քննարկվում:

3. ԿԳՄՍՆ-ն նաև տրամադրել է «Դոպինգ Սփեյս» ընկերության հետ կնքված պայմանագիրը:

2) <u>Երևանի քաղաքապետարանի մասով.</u>

Թիվ ՀԳ-0413 9/24 վարույթի շրջանակում Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄՊՀ-014084 գրությամբ Հանձնաժողովը դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հետևյալ տեղեկատվությունը ստանալու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ 2023 և 2024 թվականներին իրականացված միջոցառումների ցանկը՝ ըստ համերգային, սպորտային և այլ մշակութային միջոցառումների,

2. Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումներից յուրաքանչյուրի իրականացման նպատակով կատարված ծախսերի ծավալները,

3. նշված միջոցառումների կազմակերպման աշխատանքներն իրականացրած իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկություններ (անվանում, ՀՎՀՀ, կազմակերպաիրավական ձև, կոնտակտային տվյալներ),

4. հանրային միջոցառումների անցկացման նպատակով 2023 և 2024 թվականներին Երևանի քաղաքապետին ներկայացված տեղեկացումների ցանկը, դրանում ներառված հանրային միջոցառումների կազմակերպիչների (անվանումը, ՀՎՀՀ, կոնտակտային տվյալները) և ակնկալվող մասնակիցների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան Հանձնաժողովի թիվ ՄՊՀ-014084 գրության՝ Երևանի քաղաքապետարանը ներկայացրել է տեղեկատվություն վարչական շրջանների և Քաղաքապետարանի կողմից կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումների քանակի և ֆինանսավորման մասով: Քաղաքապետարանը տրամադրել է նաև հանրային վայրերում միջոցառում կազմակերպելու նպատակով թույլտվություն ստացած միջոցառումների կազմակերպիչ ընկերությունների ցանկը.

Աղյուսակ 1. Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից ֆինանսավորվող մշակութային և սպորտային միջոցառումները 2023թ. դրությամբ

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից ֆինանսավորվող միջոցառումները 2023թ. ընթացքում	**Մշակութային**		**Սպորտային**		**Ընդհանուր**	
	քանակ	**ծախս, դրամ**	**քանակ**	**ծախս, դրամ**	**քանակ**	**ծախս, դրամ**
Վարչական շրջաններ						
Քաղաքապետարան						
Ընդամենը						

Աղյուսակ 1-ի տվյալների համաձայն՝ Երևանի վարչական շրջանների կողմից ֆինանսավորվող թվով մշակութային և սպորտային միջոցառումների իրականացման համար ծախսվել է դրամ, իսկ Քաղաքապետարանի կողմից ֆինանսավորվող միջոցառումների համար՝ դրամ: Հետևաբար, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ընդհանուր ծախսը մշակութային և սպորտային միջոցառումների իրականացման նպատակով կազմում է դրամ:

3) «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերության մասով.

Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄՊՀ-014083 գրությամբ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 2023 թվականին կազմակերպված սպորտային, համերգային և այլ միջոցառումներից յուրաքանչյուրի քանակի, դրանց մասնակցած անձանց թվաքանակի, միջոցառումների կազմակերպիչների վերաբերյալ տեղեկություններ (անվանումը, ՀՎՀՀ),
2. 2023 թվականին իրականացված սպորտային, համերգային և այլ միջոցառումներից յուրաքանչյուրի համար Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրին տրամադրված վարձավճարների նվազագույն և առավելագույն չափերը,
3. Ձեր դիտարկմամբ կամ տեղեկություններով՝ որքան է կազմել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կազմակերպված սպորտային, համերգային և այլ միջոցառումներից յուրաքանչյուրի համար միջոցառման կազմակերպման նվազագույն և առավելագույն ինքնարժեքը և այն ձևավորող ծախսային բաղադրիչների նկարագրությունը:

Ի պատասխան Հանձնաժողովի թիվ ՄՊՀ-014083 գրության՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությունը ներկայացրել է տեղեկատվություն համալիրում իրականացված համերգային, սպորտային և այլ միջոցառումների թվաքանակի, դրանց մասնակիցների միջին թվաքանակի, վարձավճարի նվազագույն և առավելագույն ծավալների մասով, համերգային, սպորտային և այլ միջոցառումների կազմակերպման նվազագույն և առավելագույն ինքնարժեքների մոտավոր գնահատականների մասով: Նշված տվյալների օգնությամբ կատարված հաշվարկների արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2. Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 2023 թվականի ընթացքում իրականացված միջոցառումները և ստացված վարձավճարները

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում 2023 թվականի ընթացքում իրականացված միջոցառումներ	**Թվաքանակը**	**Նվազագույն վարձավճար, դրամ**	**Առավելագույն վարձավճար, դրամ**
Համերգային			
Սպորտային			
Այլ			
Ընդամենը			

Առկա տվյալներից պարզ է դարձել, որ 2023 թվականին թվով համերգային, սպորտային և այլ միջոցառումների իրականացման արդյունքում նվազագույն վարձավճարը կազմել է դրամ, իսկ առավելագույնը՝ դրամ:

«Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությունը տրամադրել է նաև տեղեկատվություն համալիրում իրականացված միջոցառումների կազմակերպիչների մասով: Մասնավորապես, ներկայացված ցուցակից առանձնացվել է թվով 23 միջոցառումների կազմակերպիչ.

Աղյուսակ 3. Համալիրում իրականացված միջոցառումների կազմակերպիչների հասույթի չափերը 2023 թվականի դրությամբ

ՀՀ	**Միջոցառման կազմակերպիչը**	**Հասույթի չափը, դրամ**
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		
18		
1 9		
20		

21		
22		
23		
Ընդամենը հասույթի չափը		8 167 185 171

2023 թվականի դրությամբ աղյուսակ 3-ում ներառված միջոցառումների կազմակերպիչ-ընկերությունների հասույթի ընդհանուր չափը կազմել է 8 167 185 171 դրամ:

4) «Տոմսարկղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով.

Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՄՊՀ-014085 գրությամբ «Տոմսարկղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել tomsarkgh.am կայքում տեղադրված համերգների (առանց պարի), սպորտային միջոցառումների, ցուցահանդեսների, դրանց կազմակերպիչների (անվանումը, ՀՎՀՀ), յուրաքանչյուրի մասով ձեռքբերված և իրացված տոմսերի ծավալի (արժեքային արտահայտությամբ) և միջոցառման անցկացման վայրի վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան Հանձնաժողովի թիվ ՄՊՀ-014085 գրության՝ «Տոմսարկղ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը տրամադրել է պահանջվող տեղեկատվությունը.

Աղյուսակ 4. tomsarkgh.am հարթակում տեղադրված միջոցառումների քանակը և իրացված տոմսերի ծավալը 2023 թվականին .

tomsarkgh.am հարթակում տեղադրված միջոցառումները 2023 թվականին	**Թվաքանակը**	**Իրացված տոմսերի ծավալը արժեքային արտահայտությամբ, դրամ**
Համերգային միջոցառումներ (դասական, բլյուզ, համերգ, ջազ, ռոք, փոփ, օպերա)		
Սպորտային		
Ընդամենը		

Հարկ է նշել, որ կատարված հաշվարկների համաձայն՝ tomsarkgh.am հարթակում իրացված տոմսերի ծավալը 2023 թվականին համերգային և սպորտային միջոցառումների մասով կազմել է դրամ:

Միջոցառումների կազմակերպիչների ընդհանուր ցուցակից առանձնացվել են թվով 18 կազմակերպիչներ.

Աղյուսակ 5. tomsarkgh.am կայքում տեղադրված համերգների, սպորտային միջոցառումների, ցուցահանդեսների կազմակերպիչների հասույթի չափերը 2023 թվականի դրությամբ

ՀՀ	Միջոցառման կազմակերպիչը	Հասույթի չափը, դրամ
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		
18		
Ընդամենը հասույթի չափը		3 677 468 881

Աղյուսակ 5-ում ներառված ընկերությունների ընդհանուր հասույթի չափը 2023 թվականի դրությամբ կազմել է 3 677 468 881 դրամ:

5) «Թիքեթոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով

Հանձնաժողովի նախագահի 2024 թվականի նոյեմբերի 2 9ի թիվ ՄՊՀ-014178 գրությամբ «Թիքեթոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել ticketon.am կայքում տեղադրված համերգների (առանց պարի), սպորտային միջոցառումների, ցուցահանդեսների, դրանց կազմակերպիչների (անվանումը, ՀՎՀՀ), յուրաքանչյուրի մասով ձեռքբերված և իրացված տոմսերի ծավալի (արժեքային արտահայտությամբ) և միջոցառման անցկացման վայրի վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան Հանձնաժողովի թիվ ՄՊՀ-014085 գրության «Թիքեթոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը տրամադրել է պահանջվող տեղեկատվությունը:

Մասնավորապես, դիտարկվել են 2023 թվականին ticketon.am հարթակում տեղադրված միջոցառումների քանակը և իրացված տոմսերի ծավալը:

Աղյուսակ 6. ticketon.am հարթակում տեղադրված միջոցառումների քանակը և իրացված տոմսերի ծավալը 2023 թվականին

ticketon.am հարթակում տեղադրված միջոցառումները 2023 թվականին	Թվաքանակը	Իրացված տոմսերի ծավալը արժեքային արտահայտությամբ, դրամ
Համերգային միջոցառումներ (դասական, բլյուզ, համերգ, ջազ, ռոք, փոփ, օպերա)		
Սպորտային		
Ցուցահանդես-միջոցառում		
Ընդամենը		

Աղյուսակ 6-ից պարզ է դառնում որ ticketon.am հարթակում տեղադրված համերգային, սպորտային և ցուցահանդես-միջոցառումների մասով իրացված տոմսերի ծավալը արժեքային արտահայտությամբ կազմել է դրամ:

Միջոցառումների կազմակերպիչների ընդհանուր ցուցակից առանձնացվել են թվով 22 կազմակերպիչ-ընկերություններ.

Աղյուսակ 7. ticketon.am կայքում տեղադրված համերգների, սպորտային միջոցառումների, ցուցահանդեսների կազմակերպիչների հասույթի չափերը 2023 թվականի դրությամբ

ՀՀ	Միջոցառման կազմակերպիչը	Հասույթի չափը, դրամ
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		
13		
14		
15		
16		
17		
18		

19		
20		
21		
22		
Ընդամենը հասույթի չափը		7 220 937 592

Աղյուսակ 8-ում ներառված ընկերությունների ընդհանուր հասույթի ծավալները 2023 թվականի դրությամբ կազմել են 7 220 937 592 դրամ:

6) «Դոպինգ Սփեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով.

«Դոպինգ Սփեյս» ընկերությունը հիմնադրվել է 2023 թվականի հուլիսի 4-ին:

:

:Ներկայումս «Դոպինգ Սփեյս» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս բաժնեմասը պատկանում է , որը

է:

ԿԳՄՍՆ-ի և «Դոպինգ Սփեյս» ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ «Դոպինգ Սփեյս» ընկերությունը պարտավոր է ապահովել Միջոցառման համար բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, իրականացնել դրանց տեղադրումը, ապահովել Միջոցառման անցկացման թեմայով գովազդային արշավներ Հայաստանում և արտերկրում: «Դոպինգ Սփեյս» ընկերությունը պարտավոր է բոլոր հնարավոր գովազդային արշավներում նշել, որ միջոցառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հովանու ներքո: «Դոպինգ Սփեյս» ընկերությունը պետական մարմնին տեղեկատվություն կներկայացնի գովազդային արշավների արդյունքում Միջոցառմանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թվի և վաճառված տոմսերի քանակի վերաբերյալ: Միջոցառման իրականացման ընթացքում կազմակերպությունը կհամագործակցի հասարակական կարգը պահպանող, ինչպես նաև միջոցառման անվտանգությունն ապահովող պետական իրավապահ մարմինների և դրանց համապատասխան աշխատակիցների հետ:

Հանձնաժողովը 2024 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 010255 գրությամբ (այսուհետ նաև՝ **Թիվ 010255 գրություն**) դիմել է «Դոպինգ Սփեյս» ընկերությանը: Մասնավորապես՝ «Դոպինգ Սփեյս» ընկերությունից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. 2023 թվականի հուլիսին «Դոպինգ Սփեյս» ընկերության հիմնադրման նպատակը, գործունեության մանրամասն նկարագիրը,

2. «Դոպինգ Սփեյս» ընկերության կողմից Սնուպ Դոգի ընտրության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ նշելով շոու ծրագրի առանձնահատկությունները,

3. «Դոպինգ Սփեյս» ընկերության և Սնուպ Դոգի ներկայացուցչի կամ ներկայացուցիչների միջև կնքված պայմանագր(եր)ի պատճեն(ներ)ը,

4. «Դոպինգ Սփեյս» ընկերության կողմից այլ հանրահայտ արտիստների մասնակցությամբ միջոցառման կազմակերպման հնարավորությունների մասին՝ առկայության դեպքում կցելով համապատասխան փաստաթղթերի, կնքված պայմանագրերի պատճենները,

5. ներկա պահի դրությամբ միջոցառման իրականացման համար «Դոպինգ Սփեյս» ընկերության կողմից իրականացված ծախսերի, ձեռքբերված գույքի վերաբերյալ տեղեկատվություն՝ կցելով համապատասխան փաստաթղթերը,

6. միջոցառման իրականացման ներկայիս ընթացքի, նախատեսված ժամկետների, իրականացվելիք քայլերի վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան Հանձնաժողովի Թիվ 010255 գրության՝ «Դոպինգ Սփեյս» ընկերությունը ներկայացրել է հետևյալը.

-

:

-

:

•

:

•

:

•

:

•Արցախում 2023 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած իրադարձությունները հաշվի առնելով՝ նախատեսվող համերգային ծրագիրը չեղարկվեց, չնայած համերգի

կազմակերպման համար արդեն իսկ կատարվել էին մի շարք անվերադարձ ծախսեր, այդ թվում՝ Սնուպ Դոգի հոնորարը՝ ԱՄՆ դոլար գումար: Բացի այդ՝ վաճառված տոմսերի մեծ մասի գումարները գնորդների ցանկությամբ վերադարձվել է նրանց և ներկայումս մի շարք տոմսերի գումարներ նույնպես գտնվում են վերադարձման փուլում (օրինակ՝ նույնականացվում են քարտերը, որոնցով կատարվել են գնումները և որոնց պետք է վերադարձվի համապատասխան գումարը):

•

:

•Նախարարության և «Դոպինգ Սփեյս» ընկերության միջև 2023 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրով նախատեսված Սնուպ Դոգի համերգի կազմակերպման և անցկացման ժամկետը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվել է մինչև 2024 թվականի ավարտը:

•

:

•

:

•ԿԳՄՍՆ-ի և «Դոպինգ Սփեյս» ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ համերգի օրվանից մեկ ամիս առաջ տրամադրվելու է բանկային երաշխիք «Դոպինգ Սփեյս» ընկերությանը տրամադրված գումարի չափով, և կատարված բոլոր ծախսերը կարող են ընդունվել միայն ըստ հաստատված նախահաշվի, ուստի այն ծախսերը, որոնք կհամարվեն տվյալ նախահաշվում չընդգրկված, ենթակա չեն լինի

փոխհատգուցման պետական միջոցների հաշվին, թեև բոլոր ծախսերն իրականացվել են պրոյեկտի լիարժեք իրականացման նպատակով:

-

:

-

:

-

:

- 2023 թվականին համերգի կայանալու դեպքում նախատեսվում էր վաճառել ընդհանուր տոմս, որից թվով -ը՝ ՀՀ դրամ, թվով -ը՝ ՀՀ դրամ և թվով -ը՝ ՀՀ դրամ արժեքներով և ամբողջ տոմսերը վաճառվելու դեպքում ընդհանուր հասույթը կարող էր կազմել ՀՀ դրամ, իսկ տվյալ գումարից ենթակա էր վճարման ԱԱՀ-ն, շահութահարկը, շոու ծրագրի համար անհրաժեշտ էքսկլուզիվ ավտոմեքենայի գումարը, դրա փոխադրման, մաքսազերծման և վերազինման (արտաքին տեսքի և տեխնիկական հնարավորությունների ամբողջական փոփոխություններով) գումարները, նախահաշվի հաստատումից հետո արտիստի պահանջով և/կամ շոու ծրագրի իրականացման համար առաջացած նոր ծախսերի փոխհատուցման գումարները, ներկայացված բանկային երաշխիքի և համերգի համար ներգրավված վարկային միջոցների տոկոսների գումարները, ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1365 որոշման թիվ 1 հավելվածով սահմանված գումարը, ինչպես նաև չնախատեսված այլ ծախսերը:
- Նշվել է նաև, որ գնորդներին և արտերկրում տոմսերի վաճառքով զբաղվող գործընկերներին վերադարձվել է շուրջ ՀՀ դրամի չափով տոմսերի գումար և ներկա դրությամբ առկա են ևս շուրջ ՀՀ դրամի չափով տոմսերի վերադարձի հայտեր, որոնք վերադարձման գործընթացում են:
- Ըստ համերգի պահանջների, ռայդերի և հասանելիությանը՝ տվյալ պահին շարունակվում է դիտարկվել Հրազդան մարզադաշտում համերգը անցկացնելու տարբերակը:
- Տրամադրվել է Միջոցառման հետաձգման արդյունքում «Դոպինգ Սփեյս» ընկերության կողմից կատարված անվերադարձ ծախսերի և վերադարձված գումարների վերաբերյալ պահանջվող հաշվետվությունը:

5. <u>Տրամադրված պետական օժանդակության մասով.</u>

Ծրագրի իրականացման համար Կառավարության որոշմամբ նախատեսվել է «Դոպինգ Սփեյս» ընկերությանը հատկացնել 2 318 596 800 դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ միջոցառման իրականացման վերաբերյալ կազմակերպության և համապատասխան արտիստի միջև կնքված պայմանագրի ապացույցը (պայմանագրի օրինակը) և պահանջվող գումարի չափով բանկային երաշխիքը պետական մարմնին տրամադրելուց հետո: Համաձայն ծրագրի իրականացման տեղեկանք հիմնավորման՝ նշյալ գումարը ուղղվելու է Սնուպ Դոգի հոնորարի վճարմանը, արտիստի թիմի տեխնիկական պահանջների, անվտանգության և ապահովագրական ծախսերի, բարձրակարգ տեխնիկական հագեցվածության ապահովմանը և գովազդային միջոցառումների իրականացմանը: Նախատեսվել է, որ Միջոցառման մեկնարկից առնվազն 1 ամիս առաջ պետական մարմնին տրամադրվելու է հատկացված գումարի չափով բանկային երաշխիք, իսկ Միջոցառման ավարտից և պետական մարմնի կողմից միջոցառման արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց հետո՝ «Դոպինգ Սփեյս» ընկերությունը միանվագ վճարմամբ Պետական բյուջե հետ է վճարելու նվազագույնը 24 381 000 դրամ, որը ուղղվելու է մշակույթի ոլորտի ֆինանսավորմանը:

«Դոպինգ Սփեյս» ընկերությունը՝ միջոցառման ամբողջական պատշաճ կատարումից հետո, տրամադրված դրամաշնորհի ընդհանուր գումարից պակաս գումար ծախսվելու դեպքում, պարտավոր է տարբերությունը (տնտեսված գումարը) վերադարձնել Պետական բյուջե՝ Միջոցառման արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Միջոցառման իրականացման համար գնված գույքը (առկայության դեպքում) Միջոցառման ավարտից հետո որպես սեփականություն հանձնվելու է պետական մարմնին կամ վերջինիս կողմից նշված այլ պետական կազմակերպության: ԿԳՄՍՆ-ի և «Դոպինգ Սփեյս» ընկերության միջև կնքված ՄՇԴ-335-2023 պայմանագրի համաձայն՝ ընկերությունն արդեն իսկ վճարվել է, իսկ Սնուպ Դոգը ստացել է իրեն հասանելիք գումարը, չնայած այն հանգամանքին, որ նախատեսվող համերգը 2023 թվականից տեղափոխվել է 2024 թվական:

Կառավարության թիվ 1365-Ն որոշման 4-րդ կետով սահմանվել է, որ որոշմամբ նախատեսված հատկացումների հաշվին ապրանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի կազմակերպման ժամանակ կարող են ամբողջությամբ կամ մասնակի չկիրառվել Հայաստանի Հանրապետության 2017 թվականի մայիսի 4-ի համար 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության, ինչպես նաև 32-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

6. <u>Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները.</u>

1. Կառավարության թիվ 1365-Ն որոշմամբ ֆինանսական միջոցներ է հատկացվել «Դոպինգ Սփեյս» ընկերությանը «Համաշխարհային աստղի հայաստանյան

հյուրախաղեր» երաժշտական նախագծի շրջանակներում հիփ հոփ արտիստ Սնուպ Դոգի հայաստանյան համերգը կազմակերպելու նպատակով:

2. Ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ «Դոպինգ Սփեյս» ընկերությանը հատկացվել է 2 318 596 800 դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ միջոցառման իրականացման վերաբերյալ կազմակերպության և համապատասխան արտիստի միջև կնքված պայմանագրի ապացույցը (պայմանագրի օրինակը) և պահանջվող գումարի չափով բանկային երաշխիքը պետական մարմնին տրամադրելուց հետո: Համաձայն ծրագրի իրականացման տեղեկանք-հիմնավորման՝ նշյալ գումարը ուղղվելու է Սնուպ Դոգի հոնորարի վճարմանը, արտիստի թիմի տեխնիկական պահանջների, անվտանգության և ապահովագրական ծախսերի, բարձրակարգ տեխնիկական հագեցվածության ապահովմանը և գովազդային միջոցառումների իրականացմանը:

3. ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 15-ի N 218-Ն որոշման հիման վրա 2024թ. փետրվարի 19-ին Նախարարության և «Դոպինգ Սփեյս» ընկերություն միջև կնքվել է N 1 Համաձայնագիրը՝ համաձայն որի համաշխարհային աստղ Սնուպ Դոգի համերգը իրականացվելու է 2024 թվականի ընթացքում՝ ըստ երկկողմանի գրավոր համաձայնեցված ժամանակացույցի, ընդ որում «Դոպինգ Սփեյս» ընկերությունը պետք է գրավոր ներկայացնի միջոցառման անցկացման ժամկետի առավելագույնը 3 առաջարկ, որի հիման վրա Նախարարությունը մեկ շաբաթվա ընթացքում պետք է հաստատի ներկայացված առաջարկներից որևիցե մեկը:

4. Նախարարության և «Դոպինգ Սփեյս» ընկերություն միջև կնքված N ՄՇԴ-335-2023 պայմանագրի 2.4.15 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվում է միջոցառումների ավարտից և Պետական մարմնի կողմից միջոցառումների արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց հետո, միանվագ վճարմամբ, պետական բյուջե ետ վճարել նվազագույնը 24 381 000 դրամ: Բացի այդ՝ ընկերությունը պարտավորվում է պետական բյուջե ետ վերադարձնել սեփականությամբ ձեռքբերված գույքը:

5. «Դոպինգ Սփեյս» ընկերությունը հիմնադրվել է 2023 թվականի հուլիսի 4-ին:

: «Դոպինգ Սփեյս» ընկերության կանոնադրական կապիտալի տոկոս բաժնեմասը պատկանում է :

6. 2023 թվականին «Դոպինգ Սփեյս» ընկերության ակտիվների չափը կազմել է ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ ՀՀ դրամ:

7. Ըստ Ընկերության տրամադրած տեղեկատվության՝ 2023 թվականի սեպտեմբերին նախատեսվող համերգային ծրագրի իրականացման համար «Դոպինգ Սփեյս» ընկերությունը կատարել է ծախսեր, ներառյալ՝ Սնուպ Դոգի հոնորարը՝ ԱՄՆ դոլար գումարի չափով, վաճառված տոմսերի մեծ մասի գումարները գնորդների ցանկությամբ վերադարձվել է նրանց և ներկայումս մի շարք տոմսերի գումարներ նույնպես գտնվում են վերադարձման փուլում: Գնորդներին և արտերկրում

տոմսերի վաճառքով զբաղվող գործընկերներին վերադարձվել է շուրջ ՀՀ դրամի չափով տոմսերի գումար և ներկա դրությամբ առկա են ևս շուրջ ՀՀ դրամի չափով տոմսերի վերադարձի հայտեր, որոնք վերադարձման գործընթացում են:

8. Ըստ Ընկերության տրամադրած տեղեկատվության՝ «Սնուպ Դոգին վճարված հոնորարը՝ ԱՄՆ դոլարի չափով գումարը, արտիստի կողմից փոխանցվել է «Դոպինգ Սփեյս» ընկերությանը:

9 Նախարարության և «Դոպինգ Սփեյս» ընկերության միջև 2023 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրով նախատեսված Սնուպ Դոգի համերգի կազմակերպման և անցկացման ժամկետը փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվել է մինչև 2024 թվականի ավարտը:

7. <u>Վարույթի փաստական հանգամանքների և վերաբերելի իրավական նորմերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է հետևյալին.</u>

Վարույթը հարուցվել է ԿԳՄՍՆ-ի վարքագծում արգելված պետական օժանդակության տրամադրման հատկանիշների առերևույթ առկայության հիմքով:

Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

Սահմանադրության 5 9րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Վերոգրյալի հիման վրա Հանձնաժողովը արձանագրում է, որ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը:

Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման

նպատակից ելնելով, իսկ այդ երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է, որով հնարավոր է բարձրացնել հասարակության բարեկեցությունը: Վերոնշյալ սկզբունքների հավասարակշռմանն ու ազատ տնտեսական մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանն են ուղղված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) իրավակարգավորումները:

Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքը տարածվում է տնտեսավարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների, վարքագծի կամ ակտերի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության կանխմանը, սահմանափակմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցությանը, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական օժանդակություն է համարվում պետական օժանդակություն տրամադրող մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտին կամ տնտեսավարող սուբյեկտների որոշակի խմբին կամ որոշակի ապրանքի համար կամ որոշակի ոլորտին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրվող ցանկացած օժանդակություն (ներառյալ՝ սուբսիդիա, դրամաշնորհ, օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ, այլ ֆինանսական միջոցներ կամ այլ պայմաններ), որի հետևանքով տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվում են այնպիսի առավելություններ, որոնք ազատ տնտեսական մրցակցության պայմաններում տրամադրվող օժանդակության բացակայության դեպքում տնտեսավարող սուբյեկտները չէին ունենա:

Վերոգրյալ իրավական նորմից հետևում է, որ ցանկացած օժանդակություն չէ մրցակցության օրենսդրության իմաստով համարվում պետական օժանդակություն: Պետական օժանդակություն արձանագրվում է միայն Օրենքով սահմանված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում:

Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական օժանդակությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում կամ կարող է հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության կանխմանը, սահմանափակմանը կամ արգելմանը կամ վնասում կամ կարող է վնասել սպառողների շահերը, արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված օժանդակությունը նախատեսված է օրենքով կամ ուղղված է շրջակա միջավայրի պաշտպանությանը, կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացմանը և ադապտացմանը, սոցիալական բնույթի խնդիրների

լուծմանը, բնական աղետների կամ այլ բացառիկ դեպքերի հետևանքով առաջացած վնասների փոխհատուցմանը, սահմանամերձ համայնքների զարգացմանը, տարածքային համաչափ զարգացմանը, մշակութային ժառանգությունների պահպանությանը, օրենքով կամ միջազգային պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը:

Այսպես, վկայակոչված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ պետական օժանդակության առկայությունը ինքնին չի ենթադրում պետական օժանդակության արգելված լինելը: Արգելված պետական օժանդակություն առկա է այն դեպքերում, երբ տվյալ պետական օժանդակության տրամադրման արդյունքում կարող է հնարավորություն ստեղծվել կամ փաստացի կանխվել, սահմանափակվել, կամ արգելվել որևէ ապրանքային շուկայում մրցակցությունը կամ վնասվել սպառողների շահերը:

Միաժամանակ, օրենսդիրը սահմանել է նաև բացառությունների շրջանակ, որոնց առկայության պարագայում օժանդակությունը չի համարվում արգելված:

Հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 26-ի «Պետական օժանդակության գնահատման կարգը սահմանելու և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 3 ՊՆ-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 270-Ն որոշմամբ սահմանված պետական օժանդակության գնահատման կարգի 3-րդ կետի համաձայն՝

Հանձնաժողովի կողմից պետական օժանդակության գնահատումն իրականացվում է.

1) մինչև պետական օժանդակության տրամադրումը (ex ante), կամ

2) պետական օժանդակության տրամադրումից հետո (expost):

Պետական օժանդակության գնահատման կարգի 5-րդ կետի համաձայն՝

Պետական օժանդակության առկայության փաստը հաստատվում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) օժանդակություն ստացողը տնտեսավարող սուբյեկտ է.

2) օժանդակություն տրամադրողը պետական օժանդակություն տրամադրող մարմին է, իսկ օժանդակության աղբյուրը հանրային ֆինանսներ կամ հանրային ռեսուրսներ են.

3) օժանդակության տրամադրման հարցում դրսևորվում է ընտրողականություն.

4) օժանդակության տրամադրմամբ տնտեսավարող սուբյեկտի համար ստեղծվում են տնտեսական առավելություններ:

- **Պետական օժանդակության առկայության հարցի կապակցությամբ.**

Շարադրվածի համատեքստում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկել հետևյալ հարցադրումները.

1. Արդյո՞ք «Դոպինգ Սփեյս» ընկերությանը համերգի կազմակերպման նպատակով տրամադրված դրամաշնորհը պետական օժանդակություն է:

Նշված հարցադրման համատեքստում հարկ է ընդգծել հետևյյալը.

• Օժանդակություն ստացողը տնտեսավարող սուբյեկտ «Դոպինգ Սփեյս» ընկերությունն է:

• Կառավարության որոշման հիման վրա Նախարարության կողմից համերգի իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է դրամաշնորհ:

• Դրամաշնորհը տրվել է կոնկրետ տնտեսավարող սուբյեկտի՝ «Դոպինգ Սփեյս» ընկերությանը:

Այսպիսով, վերոնշյալի հաշվառմամբ «Դոպինգ Սփեյս» ընկերությանը դրամաշնորհի տրամադրումը Օրենքի իմաստով հանդիսանում է պետական օժանդակություն:

• Նվազագույն թույլատրելի չափի օժանդակության առկայության հարցի կապակցությամբ.

Կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նվազագույն թույլատրելի չափի (դե մինիմիս) օժանդակություն է համարվում օժանդակությունը, որի արժեքային արտահայտությունը չի գերազանցում տասը միլիոն ՀՀ դրամը և որը պետական օժանդակության տրամադրման ծրագրի շրջանակներում երեք տարվա ընթացքում տրամադրվում կամ տրամադրվել է միևնույն տնտեսավարող սուբյեկտին:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ պետական օժանդակության առկայության փաստի հաստատման դեպքում Հանձնաժողովը գնահատում է նվազագույն թույլատրելի չափի օժանդակության առկայության հարցը:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ նվազագույն թույլատրելի չափի օժանդակություններն արգելված պետական օժանդակություններ չեն:

Նվազագույն թույլատրելի չափի օժանդակության առկայության հարցի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ տվյալ դեպքում օժանդակության արժեքային արտահայտությունը 2 318 596 800 ՀՀ դրամ է, որը գերազանցել է 10 000 000 ՀՀ դրամը:

• Պետական օժանդակության արգելված լինելու հարցի կապակցությամբ.

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը գնահատում է պետական օժանդակության արգելված լինելու հարցը, եթե առկա չէ նվազագույն թույլատրելի չափի օժանդակություն:

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ պետական օժանդակության արգելված լինելու հարցը քննարկելիս Հանձնաժողովը պարզում է մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման կամ դրա հնարավորության կամ սպառողների շահերի վնասման, ինչպես նաև հնարավոր վնասման հարցը:

Շարադրվածի համատեքստում Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պարզել.

Արդյո՞ք ԿԳՄՍՆ-ի կողմից «Դոպինգ Սփեյս» ընկերությանը դրամաշնորհի տրամադրումը պարունակում է արգելված պետական օժանդակության տրամադրման հատկանիշներ:

Հայաստանի Հանրապետությունում համերգային, սպորտային և այլ միջոցառումների կազմակերպման ապրանքային շուկայում գործում են բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ այդ թվում նաև «Դոպինգ Սփեյս» ընկերությունը:

Վերջինիս մասով հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ 2023թ. սեպտեմբերյան իրադարձությունների պատճառով համերգը հետաձգվել է:

Չեղարկված համերգի կազմակերպման համար «Դոպինգ Սփեյս» ընկերությունը կատարել է մի շարք ծախսեր, այդ թվում՝ Սնուպ Դոգի հոնորարը՝ ԱՄՆ դոլարի չափով գումար: Բացի այդ՝ վաճառված տոմսերի մեծ մասի գումարները գնորդների ցանկությամբ վերադարձվել է նրանց և ներկայումս մի շարք տոմսերի գումարներ նույնպես գտնվում են վերադարձման փուլում (օրինակ՝ նույնականացվում են քարտերը, որոնցով կատարվել են գնումները և որոնց պետք է վերադարձվի համապատասխան գումարը): Չնայած այն հանգամանքին, որ «Դոպինգ Սփեյս» ընկերության և Սնուպ Դոգի միջև կնքված պայմանագրի համաձայն վերջինիս փոխանցված ԱՄՆ դոլար հոնորարի գումարը համերգային ծրագիրը չեղարկվելու արդյունքում ենթակա չէր վերադարձման, «Դոպինգ Սփեյս» ընկերության և Արտիստի, նրա ներկայացուցիչների հետ բանակցությունների արդյունքում, ընկերությանը հաջողվել է հասնել արտիստի համաձայնությանը և հոնորարի ամբողջ գումարը (ԱՄՆ դոլար) արտիստի կողմից հետ է փոխանցվել «Դոպինգ Սփեյս» ընկերությանը: Գնորդներին և արտերկրում տոմսերի վաճառքով զբաղվող գործընկերներին վերադարձվել է շուրջ ՀՀ դրամի չափով տոմսերի գումար և ներկա դրությամբ առկա են ևս շուրջ ՀՀ դրամի չափով տոմսերի վերադարձի հայտեր, որոնք վերադարձման գործընթացում են:

Վերոգրյալից հետևում է, որ փաստացի տրամադրված միջոցները համերգի չեղարկման հանգամանքով տվյալ ապրանքային շուկայում չեն օգտագործվել:

Համերգային, սպորտային և այլ միջոցառումների կազմակերպման շուկայում գործող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Հանձնաժողովի կողմից դիտարկված կազմակերպիչ-ընկերությունների հասույթի ընդհանուր ծավալը 2023 թվականի դրությամբ կազմել է 22 039 746 563 դրամ: Հանձնաժողովի կողմից դիտարկված կազմակերպիչ-ընկերություններից բացի ապրանքային շուկայում գործում են բազմաթիվ այլ տնտեսավարող սուբյեկտներ, որոնք ուսումնասիրվող ժամանակահատվածում իրականացրել են համադրելի ծառայություններ: «Դոպինգ Սփեյս» ընկերությանը տրամադրված օժանդակության չափը կազմել է 2 318 596 800 դրամ: Հաշվի առնելով, որ 24 381 000 դրամ գումարը ենթակա էր վերադարձման, իսկ շուրջ դրամը (ԱՄՆ դոլար) կազմել է արտիստի հոնորարը, ապրանքային շուկայի ուսումնասիրված ծավալի և տրամադրված օժանդակության համադրության նպատակով պետք է օժանդակության չափից նվազեցնել դրամ գումար (24 381 000 դրամ + դրամ), որպիսի պարագայում ընկերությանը տրամադրված օժանդակության չափը առավելագույնը կազմել է դրամ (հաշվի առնելով, որ միջոցառումը տեղի չի ունեցել, սեփականության իրավունքով ձեռք բերվելիք ապրանքների պետությանը վերադարձի ծավալի գնահատում չի իրականացվել, ինչի պարագայում ևս գնահատման ենթակա պետական օժանդակության չափը կարող էր նվազել):

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն՝ «Դոպինգ Սփեյս» ընկերությանը տրամադրված օժանդակության ծավալի մասնաբաժինը դիտարկված կազմակերպիչ-ընկերությունների հասույթի ընդհանուր ծավալում կկազմի 7.06 տոկոս:

Միաժամանակ հարկ է նշել, որ միջոցառումների կազմակերպման շուկան բավականին լայն է, և Հանձնաժողովի կողմից ստացված արդյունքները վերաբերելի են շուկայի մի հատվածին: Հետևաբար, ամբողջ շուկայի գնահատման պարագայում «Դոպինգ Սփեյս» ընկերությանը տրված օժանդակության 7.06 տոկոս մասնաբաժինը էլ ավելի կնվազեր: Այդուհանդերձ, Հանձնաժողովի կողմից մնացած տվյալների ուսումնասիրության անհրաժեշտությունը սույն գործի շրջանակներում բացակայում է՝ հաշվի առնելով համերգի չկայացման փաստը, ինչպես նաև առկա տվյալների և տրամադրված պետական օժանդակության ծավալների համադրման արդյունքները:

Կարգի 21-րդ մասի 12-րդ կետի համաձայն՝ արգելված պետական օժանդակության առկայության հարցը քննարկելիս Հանձնաժողովը, ի թիվս այլնի, հաշվի է առնում համապատասխան ապրանքային շուկայում պետական օժանդակություն ստացող կամ ստացած տնտեսավարող սուբյեկտի մասնաբաժնի փոփոխությունը, ինչպես նաև մրցակցային իրավիճակը բնութագրող այլ հատկանիշների փոփոխությունը:

Հետևաբար, հաշվի առնելով, որ միջոցառումը տեղի չի ունեցել, ըստ էության տնտեսավարող սուբյեկտի մասնաբաժնի փոփոխություն կամ մրցակցային իրավիճակը բնութագրող այլ հատկանիշների փոփոխություն չէր կարող տեղի ունենալ:

Առկա փաստերի համադրմամբ կարող ենք եզրակացնել, որ պետական օժանդակության տրամադրումից հետո մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման կամ դրա հնարավորության կամ սպառողների շահերի վնասման, ինչպես նաև հնարավոր վնասման խնդիրներ չեն կարող առաջանալ:

Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ ԿԳՄՍՆ-ի կողմից «Համաշխարհային աստղի հայաստանյան հյուրախաղեր» երաժշտական նախագծի շրջանակներում հիփ-հոփ արտիստ Սնուպ Դոգի հայաստանյան համերգի կազմակերպման համար «Դոպինգ Սփեյս» ընկերությանը դրամաշնորհ տրամադրելը արգելված պետական օժանդակություն չէ:

Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցումը ենթակա է մերժման, եթե բացակայում է խախտման դեպքը:

Օրենքի 89-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ կետի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման, եթե առկա է վարույթի հարուցումը մերժելու որևէ հիմք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ ՀԳ-04139/24 վարույթը ենթակա է կարճման:

8. <u>Եզրափակիչ մաս</u>.

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 90-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 67-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարճել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության վերաբերյալ թիվ ՀԳ-04139/24 վարույթը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում դրա պատճենը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2025 թ. փետրվարի 4
Երևան